ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Արտաշես Լևոնի Պետրոսյանի

«Բնակելի շենքերի ջերմացրտամատակարարման համակարգերում էներգախնայող նորագույն մեթոդների կիրառում և համապատասխան տեխնոլոգիական սխեմաների մշակում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ե.23.03. «Շենքերի և կառույցների ճարտարագիտական (էներգետիկ, հիդրավլիկ և այլն) ապահովում» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար

Աշխարհում արտադրվող օրգանական վառելիքի շուրջ 1/3-ը ծախսվում է բնակարանների ջեռուցման և բնակարաններին տաք ջրով ապահովման համար: Արտաշես Լևոնի Պետրոսյանի ատենախոսությունում քննարկվող խնդիրները առնչվում են տարբեր բնակավայրերի կլիմայական պայմաններում նախագծերով կառուցված, միմյանցից տարբեր ջերմատեխնիկական բնութագրերով շենքերի շահագործման առանձնահատկություններին: Այս առումով, հաշվի առնելով, որ Հայաստանում այդպիսի շենքերը շարունակվում են շահագործվել, թեև նախագծվել ու կառուցվել են հաճախակի վերափոխվող շինարարական տեխնոլոգիաների պայմաններում՝ ներառելով ժամանակի պահանջները, ատենախոսության թեման շարունակում է մնալ արդիական:

Ատենախոսությունը շարադրված է 299 էջի վրա, բաղկացած է ներածությունից, 6 գլուխներից, 16 եզրակացություններից, 158 անվանմամբ գրականության ցանկից, թվով 5 հավելվածից:

Գլուխ 1-ում շարադրված են ՋԳՄՕ համակարգերի և նրանց ՋՑԱ-ի էներգաարդյունավետության բարձրացման միջոցառումները:

Գլուխ 2-ում վերլուծվել են բնակելի շենքերի ՋՑՄՀ-ի էներգաարդյունավետության վրա ազդող գործոնները՝ տարածաշրջանի բնակլիմայական պայմանները, շենքերի ջերմության և ցրտի բեռնվածությունների որոշման և տարբեր շրջաններում սրանց փոփոխման բնույթն ըստ արտաքին օդի ջերմաստիճանների և արևի ռադիացիայի,

պահպանման տևողությունները, ՋՑԱ սարքավորումների տիպերն ու էներգետիկական, տնտեսական բնութագրերը:

3-րդ գլխում քննարկվել են բնակելի շրջանների և շենքերի ՋՑՄՀ-ի էներգաարդյու-

նավետության գնահատման մեթոդների մշակման խնդիրները, քննարկվել սրանց ազդեցությունը տարբեր էներգաաղբյուրների վրա:

4-րդ գլխում, որպես ատենախոսության կարևոր խնդիրներից, հետազոտվել է շենքերի ջեռուցման անհատական ջերմային աղբյուրների էներգետիկ ցուցանիշները և համեմատվել «օդ-օդ» տիպի կայանքների ցուցանիշների հետ:

5-րդ գլխում դիտարկվել է բնակելի շենքի ջերմամատակարարման համակարգի գործունությանը ցածր ջերմաստիճանային օդային ՋՊ-ի օգնությամբ և որոշվել են դրա էներգետիկական ցուցանիշները:

6-րդ գլխում մշակվել է բնակավայրերի համար գազի պահեստավորման ծավալների որոշման մեթոդ և կատարվել են էներգետիկական ցուցանիշների վերլուծություններ:

Ատենախոսությունում առկա հետևյալ թերությունները.

1. Ատենախոսությունը շարադրված է գիտական աշխատանքների համար ոչ բավարար գիտական խստությամբ և պարունակում է ոչ հստակ բազմաթիվ ձևակերպումներ: Անհարկի օգտագործված են հապավումներ, որոնք բարդացնում են տեքստի ընկալումը: Աշխատանքում առկա են գոյություն չունեցող բառեր (օրինակ՝ «շուրջտարվա», «շրջապատող միջավայր» և այլն) և իմաստազուրկ ձևակերպումներ (մասնավորապես ՝ «...հարկ կա օգտագործել բարձր որակի էներգիայի ձև՝ էլեկտրաէներգիա» /ատենախոսության էջ՝ 17/, կամ «... էներգախնայողության հասնելու համար հարկ կա պետության և էներգետիկ ձեռնարկությունների հետաքրքրությունը և դրամական միջոցների տրամադրումը» /ատենախոսության էջ՝ 23/, կամ «Ատենախոսությունը կազմված է բովանդակությունից ....» /սեղմագիր էջ 6/, և այլն):
2. Հստակ չի ձևակերպված ատենախոսության նպատակը և դրանից բխող խնդիրները: Ձևակերպումների մեջ տեղ է գտել նկարագրողական բնույթի շարադրանք, մասնավորապես՝ «... իրագործվել է ՀՀ էներգահամակարգում արտադրված էլեկտրա-

էներգիան ՋՑՄՀ-ի կարիքների համար նոր տեխնոլոգիական սխեմաների կիրառում» և այլն: Այդպիսի դարձվածքները չեն կարող մաս կազմել ատենախոսության նպատակը և խնդիրները բաժնին և բնորոշ են ներածությունում կամ սեղմագրի ամփոփումում տեղադրվող նյութին: Այստեղ հստակ պետք է ձևակերպվեր ատենախոսության նպատակը և շարադրվեր դրանից բխող խնդիրները:

3. Առաջին գլխի վերնագիրը ձևակերպված է ոչ կոռեկտ, քանի որ էներգախնայողության վերաբերյալ եվրամիության ստանդարտները հայտնի են և դրանց նպատակների մշակումը չի կարող ներառված լինել հայցորդի հետազոտության շրջանակների մեջ: Ուսումնասիրության թեմա կարող է լինել Հայաստանի պայմանների համար դրանց տեղայնացման և կիրառման առանձնահատկությունները:
4. Հրատարակված աշխատանքներում և զեկուցումներում կան ուսանողական, երիտասարդական և ասպիրանտների պարբերականներում և գիտաժողովներում, ոչ բավարար կարգավիճակ ունեցող ամսագրերում ներկայացված գործեր՝ ինչն անընդունելի է: Հայցորդն ունի բավարար թվով հրատարակված հոդվածներ և զեկուցումներ, որոնք լիովին բավարար են դոկտորական ատենախոսություն ներկայացնելու համար և առաջիններիս առկայությունը թուլացնում է ներկայացված աշխատանքը:
5. Եզրակացությունների 1, 3 և 16-րդ կետերն ընդամենը նկարագրություններ են և պետք հանվեն եզրակացությունների ցանկից: Բացակայում են ատենախոսության արդյունքներից բխող առաջարկությունները, որոնք ելնելով ներկայացված աշխատանքի բովանդակությունից, առանցքային նշանակություն պետք է ունենային այստեղ:
6. Աշխատանքի ծավալն անհարկի ուռճացված է: Եթե ատենախոսության տեքստից հանվեր ոչ գիտական նշանակության նյութը, հնարավոր կլիներ աշխատանքը շարադրել առավելագույնը 4 գլուխներում: Տպավորություն է ստեղծվում, որ հայցորդը չորս տասնամյակում իր կատարած հետազոտությունների արդյունքները մեխանիկորեն տեղադրել է ատենախոսության մեջ: Դա զգալիորեն թուլացնում է, հեղինակի կողմից տասնամյակների ընթացքում կատարած աշխատանքի իրական

արժեքը:

Վերը բերված դիտողություններ չեն կարող ազդել ատենախոսության ընդհանուր գնահատականի վրա, որը շատ բարձր է: Իրականացվել է մեծ ծավալի գիտահետազոտական աշխատանք, որի արդյունքները կարևոր նշանակություն ունեն հանրապետությունում առկա շենքերի ու շինությունների պահպանման և արդյունավետ շահագործման համար:

Եզրակացություն

ա) ատենախոսության բովանդակությունը համապատասխանում է Ե.23.03 - «Շենքերի և կառույցների ճարտարագիտական (էներգետիկ, հիդրավլիկ և այլն) ապահովում» մասնագիտությամբ և այն կարելի է ներկայացնել հրապարակային պաշտպանության:

բ) հայցորդի հեղինակած 87 գիտական աշխատանքներն, որոնցից 45-ն առանց համահեղինակների են, ամբողջությամբ արտահայտում են ատենախոսության հիմնական դրույթները,

գ) ատենախոսությունը ավարտուն գիտական աշխատանք է և համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և դրա հեղինակը՝ Արտաշես Լևոնի Պետրոսյանն արժանի է տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի շնորհմանը:

Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հովհաննես Թոքմաջյան

(Թվանիշը՝ 23.16.05)

Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.Վ. Թոքմաջյանի ստորագրությունը հաստատում եմ.

Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտի գիտական քարտուղար, ք.գ.թեկնածու, դոցենտ

Մ.Ա. Քալանթարյան

30.05.2025